

5. Աշտարակ համայնքի փողոցների, բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման, քայքայված հատվածների փոխարինման աշխատանքների իրականացում

Համայնքի բյուջեի միջոցներով ամեն տարի կատարվում են կենտրոնական փողոցների քայքայված հատվածների վերականգնման և փոսային նորոգման աշխատանքներ: Խորհրդային միության փլուզումից հետո երկրորդային փողոցներում կապիտալ լուրջ աշխատանքներ չեն տարվել:

Նպատակ ունենալով Աշտարակը դարձնել տուրիստական կենտրոն, անհրաժեշտություն է առաջացել շարունակել հիմնանորոգել երկրորդային փողոցները: Հատկապես նրանք, որտեղ պլանավորվում են բացվել B&B-ներ, գինետներ, տնայնագործական թանգարաններ և այլն:

Նախատեսվում է նաև իրականացնել լուսավորության համակարգի ընդլայնում և վերանորոգում ինչպես ասֆալտապատվող, այնպես էլ տարբեր թաղամասեր, բնակելի շենքեր և բնակավայրեր իրար միացնող հատվածներում:

Բացի վերոնշյալից, փողոցների և բազմաբնակարան շենքերի ընտրությունը կատարվել է մի քանի չափորոշիչներով՝

1. Պատմամշակութային հուշարձանների առկայություն
2. Տուրիստական երթուղիներում ներգրավվածություն
3. Գիշերակացի, հանգստի գոտիների, ժամանցի վայրերի առկայություն
4. Համայնքի բնակչության առավել խիտ բնակեցված լինելու փաստ
5. Սոցիալապես անապահով մեծաքանակ ընտանիքների առկայություն
6. Տարբեր թաղամասերում, բնակելի շենքերում և բնակավայրերում բնակչության շարժի դինամիկան
7. և այլն:

Կարևորվել է նաև համայնքի տարբեր հատվածներն իրար կապող հանգույցների անցանելիության և հարմարավետության ապահովումը, ինչպես նաև երեկոյան ժամերին անվտանգ տեղաշարժի հնարավորությունը:

Նախատեսվում է ասֆալտապատման աշխատանքներ կատարել առավել քայքայված և ասֆալտային ծածկույթ չունեցող մի շարք համայնքային երկրորդական փողոցներում և բազմաբնակարան շենքերի բակերում:

Նախատեսվող փողոցներում հողային գրունտները հիմնականում ապահովված են ամրությամբ և կայունությամբ, քանի որ նախկինում ունեցել են ասֆալտբետոնե ծածկույթ: Այդ պատճառով էլ նախագծման փուլի, նախագծահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջների, հետազննման, անհրաժեշտ փորձաքննության և այլ լրացուցիչ համաձայնեցումների անհրաժեշտություն չկա:

Ժամանակի ընթացքում, քայքայիչ ազդեցությունների պատճառով վերոնշյալ փողոցներում և բազմաբնակարան շենքերի բակերում քանդվել է ասֆալտբետոնե շերտը, սակայն պահպանվել է խոշորահատիկ խճի և ամուր գրունտի շերտը: Ուստիորոշ փաղոցներում և բակերում չեն նախատեսվում կատարել քանդման և ֆրեզավորման աշխատանքներ: Իսկ այն փողոցները, որոնք չունեն ամուր և կայուն գրունտներ հողային պաստառը կառուցելիս հեռացվում է բնահողի բերրի շերտը (սևահողը):

Պաստառը իրականացվում է այնպիսի գրունտներով, որոնք ապահովում են ամրություն և կայունություն: Հողային պաստառի կառուցումից հետո իրականացվում են շերտերը:

Որպես հիմնատակին կապակցող շերտ օգտագործվում է 10-20մմ խոշորությամբ և 8-10 սմ հաստությամբ չափազատված խիճ, որով կառուցվում է նաև ռելիեֆը, լայնական թեքությունները, որից հետո 4 սմ մանրահատիկ միաշերտ ասֆալտբետոնե ծածկույթը:

Նախատեսվում է նաև մայթերի վերանորոգում բետոնե գունավոր սալիկներով և ասֆալտով, ինչպես նաև ամբողջությամբ կփոխարինվեն նախատեսվող փողոցների եզրաքարերը՝

բազալտե եզրաքարով: Այն փողոցներում, որտեղ փոխարինում չի նախատեսվում, եզրաքարերի բացակայող մասերում կտեղադրվեն նորերը:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ասֆալտապատել ընդհանուր 13500 քմ մակերեսով փողոցներ բազմաբնակարան շենքերի բակեր:

Փողոցներում և բակերում ասֆալտբետոնե աշխատանքներով հիմնանորոգում իրականացնելու համար հաշվի են առնվել բնակլիմայական պայմանները և հիմնատակի որակական ցուցանիշները: Այդ պայմաններից ելնելով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

- Ծածկույթի հիմքի իրականացում չափազատված խիճից
- Ծածկույթի իրականացում մանրահատիկ ասֆալտբետոնից
- Մակերեսի մեկուսացում՝ ներառյալ մակերեսային մշակում և նոր միաշերտ ծածկի կառուցում
- Զրահեռացման համակարգի վերանորոգում, որոշ հատվածներում նորի իրականացում
- Նախագծքով նախատեսվող հատվածներում կանաչափատման և այլ բարեկարգման աշխատանքների իրականացում
- Պողոցյան փողոցի հատվածում՝ մանկապարտեզի, թանգարանի և բազմաբնակարան 4 շենքերին հարակից, ոռոգման նպատակով գործող բաց Մայր առվի պաշտպանիչ ճաղաշարի տեղադրում,
- Բազմաբնակարան շենքերի, մանկապարտեզների, մարդաշատ վայրերում մայթերի լայնացման նպատակով հենապատերի կառուցում:
- Գոյություն ունեցող հենապատերի նորոգում և ուժեղացում
- Որոշ հատվածներում ճանապարհային նշանների և անվտանգության տարրերի նորոգում, փոխարինում և լրացում, ճանապարհային նշագծման իրականացում
- կողային առուների մաքրում, ակոսահանում և ամրացում

*Ծրագրի արժեքը՝ 88.000.000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրում՝ 48 400 000 ՀՀ դրամ
Կապարման ժամկետը՝ 5 ամիս*